

Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Օմէր Իլլի, թուրք - ֆրանսական բարեկամութեան խորհրդարանական խումբի նորընտիր նախագահ Միշէլ Փելլաշի հետ հանդիպումի մը ընթացքին յայտարարեց, թէ քաղաքագետները պետք է վրադին Հայկական Ցեղասպանութեան հարցով:

«Ճիշդ է քաղաքական որոշումներ որդեգրել այսպիսի անհիմն պահանջներու վրայ: Այս տեսակի հարցերը պետք է քննարկել գիտական ուսումնասիրութիւններու հիման վրայ եւ ոչ թէ քաղաքական որոշումներու միջոցով», ըսաւ Թուրքիոյ խորհրդարանի նախագահը:

Փելլաշ, իր կարգին, յայտնեց, թէ «պատմութիւնը պետք է թողուլ պատմաբաններուն»:

ՀԱՐԻՐԻ ԵՒ ՄԻՆԻՈՐԱ ԱՅՍՕՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՒ ՏԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ

Խորհրդարանը այսօր կը շարունակէ 2002 տարուան պետական պիտոճէի նախագիծի քննարկումին նուիրուած իր ժողովը: Այսօրան նիստին, վարչապետ Ռաֆիք Հարիրի եւ էլեւնուտքի նախարար Ֆուատ Սինիորա կառավարութեան պատասխանները պիտի տան երեսփոխաններու քննադատութիւններուն եւ հարցումներուն:

Վարչապետ Հարիրի Շաբաթ օր այցելեց Պաապտա, եւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ քննարկեց խորհրդարանական նիստերու ընթացքը, քննարկումներն ու կեցւածքները, եւ կառավարութեան պատասխաններն կէտերը:

Հանդիպումէն ետք Հարիրի ըսաւ, որ նախագահ Լահուտի հետ խօսած է խորհրդարանին լոյսած օրինագիծներու, եւ մասնաւորապէս ապապետականացումին վերաբերեալ օրինագիծներու վաւերացումը փութացնելու անհրաժեշտութեան մասին:

ՅԱՒԵԼԱՆ ԱՐՕՒԵՐԻ ՏՈՒՐԵՐ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ ԸՆԿՎԱՅԻՆ ՄԵՋ ՇՓՈՅ ԿՐ ԱՏԵՂՈՒ

Յաւելեալ արժէքի տուրքի կիրարկումը շաբաթավերջին շուկաներուն մէջ շփոթ ստեղծեց, նկատի ունենալով, որ թէ վաճառատունները ստիպուած են թէ սպառողները յստակ պատկերացում մը չունենին անոր կիրարկման ձեւին մասին:

ՅԱՏԻ կեդրոնին պատասխանատուներէն մին յայտնեց, որ հակառակ նախապատրաստական աշխատանքներուն, որոշ շփոթ գոյութիւն ունի վաճառականներուն մօտ: Ան յոյս յայտնեց, որ Փետրուար ամսուան ընթացքին բոլոր անորոշ կէտերը կը յստականան եւ հարցերը կը լուծուին:

Միւս կողմէ, իրողական գետնի վրայ Փետրուար ամսուան գնումի փառատօնը զգալի եռուկեղ պատճառեց շուկաներուն մէջ, մասնաւորապէս մեծ մասամբ կիրարկուած էր 50 առ հարիւր վեղջի դրուութիւնը:

ՏԵՂԻ ՏԱԼՈՎ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՑ

ԱՐԱՖԱԹ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏԵ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒՆ ԸՏՏ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եւաթ Արաֆաթ երէկ պատերազմական միջոցներով յարձակումներ իրականացուցին Իսրայէլի տարածքներէն Երուսաղէմի միջին արտաքին գրասենտի մօտ: Արաֆաթ ղեկավարեց իսրայէլացի քաղաքայիններու դէմ ահաբեկչական բոլոր արարքները: Ան ըսաւ նաեւ, որ նման գործողութիւններ կատարող շարժումները պաղեստինցի ժողովուրդը չեն ներկայացներ, որովհետեւ անոնք ահաբեկչական կազմակերպութիւններ են, որոնց գործունէութեանը վերջ պիտի դնէ:

Արաֆաթ, որուն խօսքերը լոյս տեսան «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթին մէջ, ըսաւ, որ պաղեստինցիները պատրաստ են լուծելու տագնապը եւ իսրայէլացի ռեւէզիւկներու պաղեստինցիներուն ազատութեան, գրաւման վերջ տալու:

Իսրայէլի ազատութեան եւ պաղեստինցի գաղթականներուն մասին: Արաֆաթ աւելցուց, որ կը դատապարտէ իսրայէլացի քաղաքայիններու դէմ ահաբեկչական բոլոր արարքները: Ան ըսաւ նաեւ, որ նման գործողութիւններ կատարող շարժումները պաղեստինցի ժողովուրդը չեն ներկայացներ, որովհետեւ անոնք ահաբեկչական կազմակերպութիւններ են, որոնց գործունէութեանը վերջ պիտի դնէ:

Արաֆաթ իսրայէլեան ու ամերիկեան զօրաւոր ճշդումներու կ'ենթարկուի դադրեցնելու համար Համասի ու Իսլամական



Արաֆաթ կը խօսի իր հետեւորդներու համալայի մէջ:

Ժիւստի կողմէ իսրայէլացիներուն դէմ յարձակումները: Միւս կողմէ, ան ճշդումի կ'ենթարկուի պաղեստինեան ծայրայեղական բոլոր խմբակներուն կողմէ դէմ դնելու միջազգային ճշդումներուն: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի մէկ բանբերը ըսաւ, որ Արաֆաթի յայտարարութիւնը ձեւական է ու քարոզչական բնույթ ունի: Շարոնի խորհրդատուներէն Ռաանան Կիսին իր կարծիքը արտայայտեց, որ Արաֆաթի խօսքերուն մէջ նորուի թմրակներուն կողմէ դէմ դնելու միջազգային կաւին ոչինչ բրած է ճշդումներուն: Գաղթեցնելու իսրայէլի ու իսրայէլացիներուն դէմ յարձակումները:

Շար.՝ էջ 10

ՕՍԿԱՆԵԱՆ – ԾԵՄ ԶԱՆԴԻՊՈՒՄ՝ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԵՋ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ճէմ Նի Եորքի մէջ ունեցան համընդհանուր մը: Նախարարները Նի Եորքի մէջ կը մասնակցէին Տնտեսական Համաշխարհային Ֆորումին: Օսկանեան եւ ճէմ քննարկեցին շրջանային զանազան հարցեր, ինչպէս նաեւ երկու երկիրները յուզող այլ հարցեր:

Նի Եորքի մէջ, Տնտեսական Համաշխարհային Ֆորումի աշխատանքներու ժրէն ճէմը նախարար Օսկանեան մասնակցեցաւ գրոյցի մը՝ Կեդրոնական

Շար.՝ էջ 10

ԵՐՈՂՈՒՄԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏՃԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻՆ

Կ'ԸՍԵ ԻՐԱՆԻ ԲԱՐԻՒՂԻ ՆԱԽԱՐԱՐԸ

Իրանի քարիւղի նախարար Պիժման Չանկաւնէ յայտնեց, որ Միացեալ Նահանգներու նախագահ Ժորժ Պուշի կողմէ յայտարարուած «չարութեան առանցք»ը, որ կեղծ պիտակի նման ամբարցում է Իրանի անուան, պիտի չարգելաւէ օտար ներդրումներու հոսքը՝ Իրանի քարիւղի մարդ, որ արդէն բաւական տուած է ամերիկեան պատժամիջոցներուն պատճառով:

Չանկաւնէ նշեց, որ Պուշի յայտարարութիւնը տակաւին արձագանգ չէ գտած Երոզպայի մէջ, որ ընկերութիւններ ներդրումներու ծրագիրներ ունին:

Քարիւղի երոզպայի հսկայ ընկերութիւններ, ինչպէս՝ «Ռոյլը Տաշ-Շէյ», «Թօթալ Ֆիլիպ», ԷՆԻ եւ ուրիշներ, մեծազումար ներդրումներու համաձայնագիրներ կնքած են Իրանի հետ՝ անտեսելով Ուաշինկթընի պատժամիջոցները:

Թեհրան կը յուսայ օտար ներդրումներու ճամբով ձեռք բերել անելի քան 24 միլիարտ տոնլար, կարկ տալու համար քարիւղի եւ կապի արտադրանքի ծրագիրներուն:

Չանկաւնէ շեշտեց, որ միայն ամերիկեան ընկերութիւնները պիտի տուեն Ուաշինկթընի նոր քաղաքականութենէն: «Ամերիկեան պատժամիջոցները մեռած եւ թաղուած են Երոզպայի մէջ»:

Շար.՝ էջ 10

ԱՐԱԲԿՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՏԵՐԱՑՄԻՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

ՌՈՒՄԻԱ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐ Կ՝ՈՒՂՂԷ «ԶԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՅՔ»ԻՆ ԴԷՄ ՊՈՒՇԻ ՅԱՐՁԱԿՈՂԱԿԱՆԻՆ

ՄԻՒՆԻՍՏ, 3 (ՌՈՑ-ԹԸՐԸ) — Ռուսիա կիրակի օր Մ. Նահանգներու հետ իր տարակարծութիւնները բացայայտած է՝ ահաբեկչութեան դէմ պատերազմին վերաբերեալ, մարտահրաւէր ուղղելով նախագահ Ճորժ Պուշին «Հարութեան առանցք»ին գէմ յարձակողականին եւ Արեւմուտքը երկու չափ երկու կշիռի քաղաքականութեամբ ամբաստանելով:

Տարակարծութիւնները ի յայտ եկան շաբաթավերջին, Միւնիխի մէջ կայացած ապահովութեան խորհրդակցութեան ընթացքին:

Միւնիխի մէջ Ուաշինկթընի, Իրաքի եւ Իրանի դէմ իր սպառնալիքներուն թափ տալով, կը յայտարարէր, թէ նախագահ Չանկաւնէի գործողութեան կրնայ դիմել:

Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Փոլ Ուոլֆովից Շաբաթ օր խորհրդաժողովին յայտնած է, թէ ահաբեկչութիւնը հանդուրժող երկիրներ հանդուրժողութեան պիտի կանչուին, ակնարկելով անցեալ շաբթուան նախագահ Պուշի խօսքին, ուր ան իրաքը, Իրանն ու Հիւսիսային Գորէան նկարագրած էր իբրեւ «չարութեան առանցք» եւ յայտնած, թէ անոնք հաւաքական քանդակներ կ'առնեն իր յարձակումներէն: Մակայն Ռուսիա, որ նշեալ 3 երկիրներուն հետ աւելի լաւ յարաբերութիւններ ունի, կը պնդէ, որ Աֆղանիստանի մէջ ահաբեկչութեան դէմ ամերիկեան զլխաւորութեամբ արշաւը պէտք է այլ երկիրներ տարածուի:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով երէկ՝ ուժեղապէս հակադրեց Չանկաւնէի խօսքը:

Շար.՝ էջ 10

ՅԵՏԹԱԼԵՊԱՆ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՄԵՋ՝ ՑԵՂԱԽՈՒՄԵՐՈՒ ՄԻՋԵԻ ԲԱՍՈՒՄՆԵՐ

Աֆղանիստանի փոխանցման հանգրուանի ղեկավար Համիտ Քարպայ շաբաթավերջին փութացած է վերջ տալ իրարու մրցակից ցեղախումբերու միջեւ բախումներուն, որոնք կասկածի տակ առած են անոր նոր կառավարութեան իշխանութիւնը:

Քարպայ խաղաղարարներու խմբակ մը ղրկած է արեւելեան Կպրտէյլ քաղաքը, իր նշանակած կառավարիչին եւ ցեղախումբային մրցակիցներու միջեւ ծայր տուած տագնապի մը լուծման առաջադրութեամբ՝ տասնեակներով պիւնտայներու սպանութեանէն ետք:

Միւս նախկին մրցակիցներ յետախալե-

պան Աֆղանիստանի մէջ կը փորձեն դիրք ապահովել, բախումներ տեղի ունեցած են նիւսիսային Պալիս նահանգին քանի մը վայրերու մէջ՝ շուրջ 40 Կոի խելով:

Բախումները Քարպայի համար նախանշան մը կը նկատուին, մինչ ան կը փորձէ իր կառավարութեան իշխանութիւնը ամրապնդել երկրի մը վրայ, որ երկար ատենէ ի վեր ցեղախումբային եւ համայնքային թշնամութիւններ կը դիմագրւաւէ, ինչպէս նաեւ աւելի քան երկու տասնամեակ պատերազմ տեսած է:

Միւս այլ, Քուպայի Կուստանամոյի ամերիկեան խարխախի մէջ, պաշտօնատարներ Շաբաթ օր յայտ-

նած են, թէ ամերիկեան բանակը աւարտած է առժամային քանդակներու մը կառուցումը, եւ թէ անիկա այժմ կրնայ թալեպան եւ «Քալիտա» ցանցի անդամ բանտարկեալներուն թիւը կրկնապատկել:

Ներկայիս բանտարկեալներուն թիւը 158 է:

Միւս կողմէ, ֆրանսացի 190 պիւնտարներ Շաբաթ օր հասած են Խըրխըպիստան, միանալով ամերիկեան խմբակի մը՝ օժանդակելու համար խարխախի մը հաստատման աշխատանքներուն:

Խարխախի մօտ ատենէն Աֆղանիստանի մէջ պատերազմ մղող համախմբումի հապարաւոր ուժերու Շար.՝ էջ 10

ՇԵՒՐՏԱՍԾԵ ԶԱՄԱՆՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ

ՌՈՒՍԱԿԱՆ ՌԻՓԵՐՈՒ ԿԵՑՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՐԱՋԳՈՒՄ՝ ԱՐԵԱՋԻՈՑ ՄԵՋ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ Շաբաթ օր յայտնած է, թէ հաւանութիւն տուած է անջատողական Արխազիոյ շրջանին մէջ ռուս խաղաղարար զինուորներու կեցութեան ժամանակամիջոցը մինչեւ Յուլիս 11 երկարաձգել:

Պատկերասփռուած խօսքի մը մէջ, Շեւարտնաձէ նաեւ ողջունած է ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի մէկ բանաձեւը, որ յաւելեալ ճիգերու կոչ կ'ուղղէ՝ քաղաքական լուծում մը գտնելու համար Արխազիոյ 10 տարուան տագնապին:

Ռուս խաղաղարար զինուորներ Արխազիոյ եւ Վրաստանի մնացեալ բաժինին միջեւ սահմանին հակած են 1992-93 պատերազմէն ետք, երբ արխազ զինեալներ զուրու քշած էին վրացական ուժերը:

ՄԱԿի զինուորական ոչ զինեալ ղեկավարութեան փոքր խմբակ մը նաեւ կը գտնուի հոն:

Վրաստանի եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւնները նախկին խորհրդային պետութիւններուն միջեւ ամէնէն խախտուածներէն մէկն է եւ Վրաստան յաճախ ամբաստանած է Մոսկուան անջատողականներուն զօրավիճ կանգնելու յանցանքով:

Վրաստան կանոնաւոր կերպով կը զգուշացնէ, թէ ռուսական ուժերը տուեն պիտի զրկէ, սակայն միշտ ալ կ'երկարաձգէ անոնց կեցութիւնը:

(ՌՈՑԹԸՐԸ)

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ

«Ազգակ» ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

- Ստանալու համար դիմել գրախանութեան՝ Շամազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:
- Բովանդակութիւնը տեսնել էջ 2:

ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.

Շար.՝ էջ 10

ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԺՈՄՊԼԱԹԸ

Ընկերվար Յառաջդիմական Կուսակցությունն ղեկավար, երեսփոխան Ուսյիտ Ժոմպլաթ երկկայնեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Քննարկումի անարկար դարձան Լիբանանն ու շրջանը յուզող հարցեր:

Հանդիպումին ետք Ժոմպլաթ նշեց, որ յաւելեալ արժեքի տուրքը ըստ երեւոյթին ժողովրդին ընդունելութիւն չէ գտած: Ան անհրաժեշտ նկատեց շրջանային և միջազգային մարտահրաւերներուն դիմաց Լիբանան - Սուրիա առանցքին առաւել ամրապնդումը:

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՑ ՅՈՅՆ ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԼԻԿԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Արամ Ա. Կաթողիկոս, Ուրբաթ, 1 Փետրուար 2002ին ընդունեց յոյն կաթողիկէ եկեղեցւոյ լիկալի կեդրոնական վարչությունը լրի կազմով: Հանդիպումը առիթ մը եղաւ խօսելու միջեկեղեցական յարաբերութեանց եւ Լիբանանի ու Միջին Արեւելքի այժմու կացութեան հարցերուն մասին:

Վեհափառ հայրապետը կարեւորութեամբ շեշտեց եկեղեցիներու միջեւ գործակցութիւնը, յատկապէս Միջին Արեւելքի մէջ: Ան նաեւ ընդգծեց քրիստոնէայ իւլամ երկխօսութիւնը, որպէսզի աւելի ամրապնդուի քրիստոնէութեան ու իսլամութեան համակցութիւնը շրջանին ներս:

Խօսելով Լիբանանի այժմու կացութեան մասին, վեհափառ հայրապետը իր մտահոգութիւնը յայտնեց տիրող տնտեսական տագնապին գծով եւ ըսաւ, թէ համայնքապետեր, կապակերպութիւններ ու պետութիւններ պէտք է միասնաբար աշխատին առաջը առնելու համար տնտեսական տագնապի հետեւանքներուն: Վեհափառ հայրապետը նաեւ արժարժեց Լիբանանի հայութեան իրաւունքներու հարցը եւ ըսաւ թէ հայ համայնքի պատասխանատուներ ամէն ճիշդ պիտի թափեն տէր կանգնելու համար Լիբանանի հայութեան իրաւունքներուն:

Լիկալի ներկայացուցիչները իրենց գնահատանքը յայտնեցին միջազգային գետնի վրայ վեհափառ հայրապետին կատարած աշխատանքներուն մասին, թէ՛ միջեկեղեցական իմաստով եւ թէ Լիբանանի դատը միջազգային ընտանիքին ներկայացնելու իմաստով: Անոնք վեր առին Լիբանանի հայութեան դրական ու գործօն ներկայութիւնը Լիբանանէն ներս եւ արտախաղտեցին իրենց ամբողջական պօրակցութիւնը Լիբանանի հայութեան իրաւունքներու ձեռքբերման աշխատանքին:

ՄԱՀԱԶԴ

Տիար Արմէն Պիլէմճեան
Տէր եւ տիկին Սահակ Մաթոսեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Էտմոն Հաժար եւ զաւակունք
Տէր եւ տիկին Կարպիս Հաժար եւ զաւակունք
Տէր եւ տիկին Վրէժ Հաժար եւ զաւակունք
Տէր եւ տիկին Անդրանիկ Պիլէմճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Պարգեւ Պիլէմճեան եւ զաւակունք
Կրպիճեան ընտանիք
Հատիտեան ընտանիք
Ղազարեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, քեռիին եւ հարազատին՝

ԳԵՈՐԳ ԿԱՐԱՊԵՏ ՊԻԼԵՄՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ 2 Փետրուար 2002ին առաւօտեան ժամը 9:00ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 3 Փետրուար 2002ին, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրն Շրպէլի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընտանիքի իբրեւ մահադդ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Սահակ Մաթոսեանի բնակարանը, Ամալնո թաղ, «Մակի Հաժ» փողոց, Կիրակի 3, Երկուշաբթի 4 եւ Երեքշաբթի 5 Փետրուարին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արրահամ Տէտեան եւ զաւակունք
Տիկին Երանուհի Մանիսաճեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Սահակ Տէտեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Յակոբ Տէտեան եւ զաւակունք
Տիկին Աննայի Էօրէճեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Յովհաննէս Աճէմեան եւ զաւակունք
Մաղամեան ընտանիք
Նախոր ընտանիք
Մանիսայեան ընտանիք
Լէփէճեան ընտանիք
Մանիսաճեան ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

ՇՈՒԾԱՆ ՏԵՏԵԱՆԻ (ՇՈՃԵԱ՛՛Ս ԱՄԴԱՄԵԱՆ, 1921ԻՃ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 31 Յունուար 2002, երեկոյեան, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը կատարուեցաւ Ուրբաթ, 1 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 3:00ին Էջրեֆիէի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրն Շրպէլի Հայ Աւետ. գերեզմանատունը:

- Ներկայ ընտանիքի իբրեւ մահադդ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին Ուրբաթ 1, Շաբաթ 2 եւ Կիրակի 3 Փետրուար, հանգուցեալին աղջկան՝ տիկին Երան Մանիսաճեանի բնակարանը, Նահր. Էյ Մոթ, «Հըրբէ» փողոց: Իսկ Երկուշաբթի 4 եւ Երեքշաբթի 5 Փետրուարին հանգուցեալին զաւակին՝ տէր եւ տիկին Աբրահամ Տէտեանի բնակարանը, Բըրբէք Շեհուան, Պալլատա:

ԱՊԱՇՆՈՒԿԱԿԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԸՆԹՐՈՒՄ

Լիբանանեան ապահովական աղբիւրներ հերքեցին բրիտանական «Թայմս» օրաթերթի հաղորդած այն տեղեկութիւնները, ըստ որոնց Ուսամա Դըն Լատէնի գլխաւորած «Բալիտա» կազմակերպութիւնը տեղափոխուած է Պէքաս:

«Այս լուրերը Լիբանանի դէմ քարոզչական արշաւին մաս կը կազմեն եւ ոչ մէկ հիմնական ճշմարտութիւն ունին» ըսին նոյն աղբիւրները:

Անոնք ընդգծեցին, որ Հըլպալլայի եւ «Բալիտա»ի մէկտե-

ղումը գաղափարական պատճառներով անկարելի է, իսկ «Բալիտա» Միջին Ասիոյ եւ Ֆիլիպիններու մէջ կեդրոններ ունի, բայց Հըլպալլա արտասահմանի մէջ ներկայութիւն չէ:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԱՊԱՇՆՈՒԿԱՏՈՒԹԻՒՆ

Տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի հարցազրոյցի մը ընթացքին հաւաստեց, որ բրիտանական «Թայմս» օրաթերթի հաղորդած այն լուրը, թէ Ուսամա Դըն Լատէնի «Բալիտա»

կազմակերպութիւնը կը փորձէ տեղափոխուի Լիբանան, մաս կը կազմէ Իսրայէլի կողմէ Լիբանանի դէմ շղթայալքածած ապատեղեկատուութեան արշաւին:

«Օրաթերթը կը գրէր, որ այս լուրը քաղած է գաղտնի սպասարկութիւններու աղբիւրներէ, եւ բացալայտ է Լիբանանի վրայ ճնշում բանեցրնելու եւ վայն վարկաբեկելու դիտարկութիւնը», ըսաւ Արիտի, վերահաստատելով, որ Լիբանան դէմ է ահաբեկչութեան:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՐԶՈՒՄԻ ԻՐԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԶԿԱՆ

Միջառանքի նախարար Ալի Քանասո երէկ մամուլի ասուլիսի մը ընթացքին հերքեց այն տեղեկութիւնները, թէ Լիբանանի մէջ պիտուորական մարտի միջոցով իրանեան կեդրոններ կան, դիտել տալով, որ ահաբեկչութեան դէմ ամերիկեան արշաւը մագլցողական է եւ ահաբեկչութիւն կը համարէ նաեւ ինքնապաշտպանութիւնն ու բռնագրաւումին դէմ դիմադրութիւնը:

«Խորհրդարանի վերջին նիստերուն կատարուած գործունէութեան մասին երեսփոխաններու արտախաղտեցիքը, բայց պէտք է հասկնալ պետութեան դրամական վիճակն ու կարիքը՝ հաստիքներու», ընդգծեց ան:

«Ք ա դ ա ք ա ց ի ն տնտեսական եւ ընկերային դժուարութիւններուն բերմամբ չկրցաւ ընդունիլ յաւելեալ արժեքի տուրքը, բայց պէտք է հասկնալ պետութեան դրամական վիճակն ու կարիքը՝ հաստիքներու», ընդգծեց ան:

Իսկ կատարուած մնայն ու մեկնիլը կ'որոշէ խորհրդարանը», ըսաւ Քանասո, աւելցնելով, որ կառավարութեան փոփոխութեան համար անհրաժեշտ է քաղաքական համաձայնութիւն հասնելու, մասնաւոր իշխանութեան պետերուն միջեւ, եւ ցարդ նման բան չէ գոյացած:

ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ

ՎԱՐՊԱՆԱՆՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԵՒ ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՄԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ

Կը բանախօսեն՝

ՀՐԱՅՐ ԸԷՂԵՃԵԱՆ

ՀՐԱԶ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002, առաւօտեան ժամը 11:30ին, Այնճարի Հայ Կարգիկէ վարժարանի սրահին մէջ:

Գեղարուեստական յայտագիր՝ մասնակցութեամբ գիւղի երեք վարժարաններու աշակերտութեան:

ԴԱՍՏԻՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Հ. Յ. Գ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՄԻՏԷ

Հ. Յ. Գ. ԱՌԻԲԵՆ ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիթ՝ **TVA**
(ՅԱԵԼԵԱՆ ԱՐԺԵԻ ՏՈՒՐԵ)

Կը գեկուցէ՝

ՊՐՆ. ՅԱԿՈԲ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ
(Երդուեալ հաշուեքննիչ)

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 4 Փետրուար 2002, երեկոյեան ժամը ճիշդ 8:00ին, Նորաշէնի Հ. Յ. Գ. «Ուրբէն» ակումբի սրահին մէջ:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ԱԶԳ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԲՈՒԼԷՃ

BRUNCH

"MONROE" ՊԱՆԴՈՎ,

12 ՄԱՐՏ 2002

La Saldanie DE LUNETTES

La premiere au Liban

Autoreoute Jdeideh Près Boghos Optic Tél. (01) 871261

ՂԱՍՍԱՆ ՂԸՍՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ

Աշխատանքային ընդհանուր համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղըսն երէկ հրապարակուած հաղորդագրութեամբ մը քննադատեց յաւելեալ արժեքի տուրքը գործադրելու փութկոտութիւնն ու վայն գանձելու կառավարութեան անպարանքին պատճառով շուկային վրայ ստեղծուած իրարանցումը:

«Առաջին օրէն յստակ դարձաւ, որ կենսական ապրանքներ տուրքէ պէտք պահելու կառավարութեան հաւաստիքը ճիշդ չէր, եւ փաստօրէն տուրք վճարուեցաւ հացին եւ կաթին համար, իսկ պենչիկին պարագային գանձուած տուրքը կը գանձուի նաեւ անոր գինին արդէն մաս կազմող տուրքին վրայ», ըսաւ ան:

«Կառավարութեան հարկային միջոցառումներուն աշխատանքներու բնական պատասխանը պիտի ըլլայ փողոց իջնել, եթէ չդադրի այս տուրքի գործադրութիւնը», պնդեց Ղըսն:

Միւս կողմէ, սեփական վարժարաններու ուսուցիչներու սենտիքային որոշումով Չորեքշաբթի, 6 Փետրուարին պիտի գործադրուի միօրեայ գործադրուի, նկատի ունենալով որ ուսուցիչներուն պահանջները տակաւին կը մնան անտեսուած:

ՀԱՍՏԶԳԱՅԻՆԻ ԹՈՐՈՍ ԱՌՍԼԻՆ

ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱՎԱԴԵՄԻԱ

ՁԻՆԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԲԱՆԱԴ ՊԱՔԻՇ SNOW LAND HOTEL

Կիրակի, 17 Փետրուար 2002ին

- Սեկնու՝ Շաղգոյեան կեդրոնէն առաւօտեան ժամը 9:30ին
- Փոխադրութիւնը՝ փոքր եւ հանգստաւետ պասենթով
- Կուորայ ճաշ՝ Snow Land պանդոկի ճաշարահին մէջ
- Ski piste, tele siege, Jet ski եւ ձիւնակառքով պտոյտ փափաքողներուն
- Սակ.՝ Սեժերու 20 \$, պգտիկներու 10 \$ (12 տարեկան)

Տոմսերը պահովել Լեւոն Շանք կեդրոնէն, Համազգայինի գրաստանէն Շաղգոյեան կեդրոն եւ Չոքաբ Էլ Պլաթ ձեմարան մինչեւ 15 Փետրուար 2002:

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մէկ ազգ Կարանդ Փափագեան
Ախալքալակի պայքարը Բուրբէն
Տաշիրի գաւառին բռնագրաւումը Բուրբէն
Ընդհանուր ակնարկ Հայաստանի հիւսիսային սահմանների վրայ Լէօ
Ջաւախքի պատմութիւն Աշոտ Մեթրոնեան
Ջաւախքի գերեզմանները արեւմտահայ պատմագրական պայքարում Աշոտ Մեթրոնեան
Ախալքալակի հայ համայնքի պատմութիւնը Փրոֆ. Կ. Գ. Ղաֆադարեան
Տանջուած ժողովուրդի մը չքնաղ հայրենիքը՝ Վ. Աւագեան
Ջաւախք Արցախեան պատմամարտին ջաւախքի նահատակները
Հոգեւոր - եկեղեցական կեանքը Ջաւախքում Աշոտ Մեթրոնեան
Նորօրեայ հոգեւոր կեանքը հիւսիսային Ջաւախք աշխարհում Սառաթար սարկաւազ Դուլիկեան
Ջաւախքի մշակութային կեանքը Հայկազուն Ավրցեան
Ջաւախքի գեղանկարչներու եռեակը Մովսէս Ծիրանի
Ջաւախքի աշուղները Նշանաւոր ջաւախքիները Արտաշէս Արեղեան
Ջաւախքի կրթական համակարգը Եւ. Նաւոյեան
Հայ մամուլը եւ գրատպութիւնը Ջաւախքում եւ Մեքսիկոյում Վահան Մաղաբեան
Բաց դարպաս՝ սահմանէն անդին Շողիկ Աշրգեան
Ջաւախքի պատմական յուշարձանները Մամուլի կարգապետեան
Վրաստանի քաղաքականութիւնը հայկական մշակութային կոթողների նկատմամբ Մամուլի կարգապետեան
Հայ - վրացական փոխ յարաբերութիւնները Բոստոմ
Հայ - վրացական կնճիռը Արշակ Աբաբեան
Մենք եւ մեր հարեւանները Արտաշէս Արեղեան
Հայ - վրացական յարաբերութիւնները ժամանակակից փոյլում Սեբէկ Շաքարեան
Վրաստանի անկախութեան աղբիւրը եւ հայ - վրացական յարաբերութիւններուն հեռանկարը Ինչորդ Կիրակոսեան
Թիֆլիսի հայութիւնը Խաչիկ Տէր Լուկասեան
Սեֆելիա Գրիգորեան - Շահաբեան
Արապիայի հայկական համայնքը

ԿԸ ՆՈՒՐԵՆ

- Արտէն Ուղուրեանի մահուան յիշատակին համար Սեմինար 50,000 լ.Ն. ԲԱՄԼԻ Ծերանցոյցին:

ԿՈՒՉՈՒԻ

- JACK GIFTS հաստատութեան Gadgetsի բաժնի կարիքը ունի վաճառող օրիորդի մը: Դիմել անձամբ, «Արմինիա» փողոց, քաղաքապետարանի կից:

ԾԱՆՈՒ ԾԵՆՔ

- 2 յարկանի շէնք մը Փոլիկարպոսի շրջան: Հեռ. 01 - 242876 առաւօտեան ժամը 8:00է մինչեւ երեկոյեան 5:00:

ՎԱՐՉՈՒ ԶԱՐԿԱՐԱԺԻՆ

- 3 ցնջասենեակ, 2 բաղնիք եւ յարակից մասեր, Չալքա: Հեռ. 01 - 267262, 01 - 263712:

ՍԵՖԵԼԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ - ՇԱՀԱԲԵԱՆ

Միջառանքի հանգոյց Մամուլի կ'օրեան
Վրաց քաղաքական մտեցումները Ախալքալակ - Ախալքալակ գոտու մահմեդական բնակչութեան խնդրի առնչութեամբ Մամուլի կ'օրեան
Ռազմական համագործակցութիւնը Ռուսաստանի դաշնութեան եւ Վրաստանի միջեւ Օ. Ս. Բելով
Չէչենական խնդիրը վրաց - ռուսական յարաբերութիւններում Մամուլի կ'օրեան
Թուրքիա - Վրաստան - Ադրբեջանի փոխ յարաբերութիւնների հեռանկարի հարցի շուրջ Կրուարդ Ղազարեան
Վրաստանի եւ ՍՄՆի յարաբերութիւնները Ս. Ա. Միխայլով
Վրաստանի արտաքին քաղաքականութեան կերպարանափոխութիւնները Սեբէկ Շաքարեան
Հայոց եւ Քարթլոյ Մեթրոնեանի
Ընդհանուր տեղեկութիւններ Ջաւախքի մասին

ԻՐԱԲԵՆ ԲԱՐԻՒԴ ՆԵՐԱԾԵԼՈՒ ԶԱՐՑՈՎ

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՄԵՐԺԷ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԱՄՔԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱԿԻ մէջ Սուրիոյ պատուիրակներէն մէկը հերքեց բրիտանական ամբաստանութիւնները, ըստ որոնց Դամասկոս իրաքեան քարիղ կը ներածէ խախտելով ՄԱԿի ամպարկոն, յայտնեցին զիւսնազիտական աղբիւրներ շարքաւորելին:

Անցնող շաբթուան ընթացքին Բրիտանիա ՄԱԿի պատժամիջոցներու յանձնախումբին զոնփակ նիստերուն երկու անգամ ամբաստանութիւններ ուղղեց Սուրիոյ՝ պահանջելով, որ Դամասկոս յուսաբանութիւններ տայ ներածուած ու պապ սուրիական նաւահանգիստներէն արտածուած քարիղի մասին: Բրիտանիա օգտուած է Սուրիոյ նոր անդամակցութենէն Ապահովութեան խորհուրդին, որուն պատժամիջոցներու յանձնախումբի նիստերուն աւելի դիրքին է բացատրութիւն պահանջել Սուրիային: Նախապէս, Ապահովութեան խորհուրդի անդամ Ռուսիա Բրիտանիոյ եւ այլ երկիրներու Սուրիան ամբաստանելու քանի մը փորձերը արգելակած էր, դիտել տալով, որ բարար փաստ չունին, հաստատելու իրենց կասկածները: Ուրբաթ օրուան նիստին ալ Ռուսիա նոյն կեցուածքը որդեգրած էր սակայն սուրիացի պատուիրակին ներկայութիւնը առիթ տուած էր Բրիտանիոյ ուղղակի ամբաստանելու:

Սուրիացի պատուիրակ Ֆայսալ Մեքտապ հերքեց, որ Սուրիա ապօրինի կերպով քարիղ կը ներածէ Իրաքէն: Ան աւելցուց, որ Սուրիա կը կառուցէ քարիղատար նոր խողովակ մը, սակայն իր յուսանքները ՄԱԿի հսկողութեան տակ: Բրիտանիա իր կարգին մեծաթիւ փաստաթուղթեր ներկայացուց Միջին Արեւելքի մէջ քարիղի արտադրութեան եւ արտածման քանակին մասին: Բրիտանացի պաշտօնատարներ կ'ըսեն, որ Սուրիոյ քարիղի արտածման յանձնարարը: Քարիղի մասնագետներ կը նախատեսեն, որ այս ընթացքով 2002ին, Իրաքեան քարիղի մաքսանենգումը օրական երկու հարիւր հազար տակաոի պիտի հասնի:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՐԻՒՆԱՐԲՈՒ ՊՈՒՇԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵՆԱՏԻՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՋԷ ԸԱՍՏԱՏԵԼ

ԿԸ ԳՐԷ ԻՐԱԲԵԱՆ ՄԱՍՈՒԸ

Իրաքեան մամուլը դատապարտեց Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Դուշը՝ Իրաքի, Իրանի եւ Հիւսիսային Բորնէայի հանդէպ կատարած իր յայտարարութեան համար:

«Արիւնարբու Պուշը եւ անոր կառավարութիւնը իրենց աշխատանքը կը կեդրոնացրեն ան ամբողջ աշխարհը ամերիկեան մենատիրութեան ենթարկելու համար, իբրեւ պատրուակ ունենալով ահաբեկչութեան դէմ պայքարը», կը գրէր «Պապէլ» օրաթերթը: «Պապէլ» կ'աւելցնէր, որ անգամ մը եւս գաճաճ Պուշը վայրագ արտայայտութիւններ կ'ունենայ այն երկիրներուն դէմ, որոնք արդէն իսկ կը տառապին անոր յարձակողական քաղաքականութենէն:

Պուշ Ուրբաթ օր անգամ մը եւս պոռագացած էր Իրաքը, Իրանը եւ Հիւսիսային Բորնէան, դիտել տալով, որ անոնք պիտի ճաշակեն դառն հետեւանքները, եթէ իրենց իրավիճակը չբարելաւեն: Մէկ շաբթուան մէջ երրորդ անգամ ըլլալով Պուշ կը պոռագացնէր իր յայտարարութիւնները, որոնք ըստ Ուաշինկթընի հաւաքական քանդումի պէնթըրը կը պատրաստեն:

«Ժուճուրիա» իր կարգին ամբարտաւանութեամբ ու անհոգութեամբ ամբաստանեց Պուշը, դիտել տալով, որ ամերիկեան յայտարարութիւնները ցուցանիչ են, թէ Ուաշինկթընի տագնապը որքան ծանր է:

Իրաքեան օրաթերթերը կոչ ուղղեցին ամբողջ աշխարհին դատապարտելու Պուշի յայտարարութիւնները: Իրան եւ Հիւսիսային Բորնէա, ինչպէս նաեւ Չինաստան դատապարտած ու անընդունելի նկատած էին Պուշի սպառնալիքը:

Միւս կողմէ, Ռուսիա շարքաւորեց իր յայտարարութիւնները, որ յայտարարեց, որ յուսուած էր Պուշի յայտարարութիւնները, որ զուտ արդիւն չունին: ՄԱԿի պէնթընի քանի մը անդամներ իրաք վերադարձին մասին:

Ռուսիոյ վարչապետ Միխայիլ Քասիպով, որ կը խօսէր Նիւ Եորքի մէջ տեղի ունեցող տնտեսական

համաշխարհային խորհրդածողովին, ըսաւ, որ յայտարարութիւնները չեն լարեցնուցնուց անոր համար ամէն մարդ պէտք է համբերատար դառնայ: Քասիպով աւելցուց, որ Ռուսիա դէմ է ահաբեկչութեան դէմ պայքարի դէպի Իրաք տարածելու ծրագրին:

ԹՈՒՐԻՒՆՅՈՅ վարչապետ Պիլիէն Էճեւիթ նամակ մը կը պատրաստէր ուղարկելու համար Մատանմ Հիւսէյնի, հաղորդեց թրքական օրաթերթ մը, ըստ որուն թուրք վարչապետը Մատանմէն պիտի պահանջէր արտօնել ՄԱԿի պէնթէնի քանի մը վերադարձը: «Մատանմէն» օրաթերթը աւելցուց, որ Էճեւիթ պիտի պոռագացնէ Մատանմը, շեշտելով, որ մերժումի պարագային պատերազմի մը սպառնալիքը պիտի դիմագրաւէ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՖԻԼԻՓԵԱՆՆԵՐ.- Հիւսիսային Ֆիլիպիններուն մէջ պատերազմը անընդհատ քաղաքացիական պատերազմի վերաբերելով: Մէկ շաբթուան մէջ երրորդ անգամ ըլլալով Պուշ կը պոռագացնէր իր յայտարարութիւնները, որոնք ըստ Ուաշինկթընի հաւաքական քանդումի պէնթըրը կը պատրաստեն:

Նուեցան, յայտնեց պաշտպանութեան պաշտօնատար մը: ՉԱՄՊՈՒՆԿԱ.- Հարաւային Ֆիլիպիններուն մէջ ինը ճամբորդներ փրկուեցան Սուլու կղզիին շուրջը ընկողմած նաւու մը մէջէն, յայտնեցին պաշտօնատարները: ՆԱՐ ԸՆԿՂՈՒՄԸ.- Չինաստանի ոստիկանութիւնը ձերբակալեց փնտրուած «մարդկային մաքսանենգ» մը, որ պատասխանատու էր հարիւրաւոր անօրէն գաղթականներու Չինաստան փոխադրութեան:

ԹՈՒՐԻՒՆՅՈՅ ԱՖԻՈՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ԵՐԿՐԱՇԱՐԺ

ԹՈՒՐԻՒՆՅՈՅ (ՌՈՅԹԸՐԶ).- Թուրքիոյ արեւմտեան Աֆիոն շրջանին մէջ պատահած երկրաշարժ մը պատճառեց 35 կոհ եւ բազմաթիւ վիրատուներ: Երկրաշարժին ստեղծած հարցերը լուծող կեդրոն մը Անգարայի մէջ յայտնեց, որ 6 աստիճան ռիխթըր ուժգնութեամբ երկրաշարժը քար ու քանդ ըրած է 77 շէնքեր: Կեդրոնը յայտնեց, որ երկրաշարժին պատճառով ստեղծուած կացութիւնը հակակշիռի տակ առնուած է: «Քոլոր» նախապետութիւնները նկատի առած ենք եւ արդէն իսկ մեծ թիւով վրաններ տրամադրած այդ շրջանի բնակչութեան», ըսաւ վարչապետ Պիլիէն Էճեւիթ:

ԱՓՐԻԿԵԱՆ ԵՐԿՐԻՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆԸ ԶՆՋԵԼՈՒ ԿՈՉ՝ ՔԱԶԱՅԻՆ

Լիպիոյ ղեկավար Մուամմար Քադաֆի կոչ ուղղեց՝ ջնջելու սահմանային հսկողութիւնը ափրիկեան երկիրներուն միջեւ: Պատկերասփոռուած յայտարարութեան մը ընթացքին Քադաֆի ըսաւ, որ ափրիկեցի ժողովուրդները պէտք է պատօրէն եւ առանց անցազորներու անցնին ափրիկեան երկիրներու սահմաններէն, ուրկէ պէտք է ջնջուին նաեւ մաքսատուները: Քադաֆի շեշտեց, որ հսկողութիւնը վերցնելու եւ պատ անցքի պահանջը չի նշանակել, որ ափրիկեան երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող սահմանագիծերն ալ պիտի վերցուին: Ան աւելցուց, որ յիշեալ սահմանագիծերը կրնան փոփոխութեան ենթարկուիլ երկիրներուն միջեւ առանձին համաձայնութիւններու միջոցով: Քադաֆի ըսաւ նաեւ, որ ափրիկեան մէկ երկրէն միւսը անցնող ափրիկեցիները միայն անձնաթուղթ մը պէտք է ցոյց տան սահմանին վրայ:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԱՐԺԱՆԹԻՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԻԳԵՐ

Արժանթինի կառավարութիւնը վերաքննութեան ենթարկեց տնտեսական տագնապին լուծում մը գտնելու համար մշակուած ռազմավարութիւնը, երբ դատական ատեան մը շրջեց պահ դրուած գումարներու ստեղծման որոշումը՝ դրամատուները եւ «փեյօ» ենթարկելով տրապաւելու հաւանական վտանգին: Նախագահ Էտուարտո Տոխալտէ ատեանին տուած որոշումը համարժեք նկատեց շարժաթի, մինչ Միջազգային Դրամական Ֆոնտի նախագահ Հորսե Բեօլիլը յայտնեց, որ որոշումը «սահաւոր կերպով» բարդացուցած է դրամատուներու պահ դրուած գումարներուն փոխանցումը:

Շար.ը՝ էջ 10

ԱՆՈՒՎՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Արքեպիսկոպոս Կարգանանց Զորավարաց Տօնին առիթով, Հիմնադրութիւն, 7 Փետրուար 2002ին, Ս. Կարգանանց Եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Ս. պապարագ:

Պիտի պատարագէ ու քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի) Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 7:30 Սրբազան հօր ժամանում՝ ժամը 9:30 Ս. պատարագ՝ ժամը 10:00 Զարոզ՝ ժամը 11:00

ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ 3 առաջիկայ Հինգշաբթի, 7 Փետրուար 2002ին, Արքեպիսկոպոս Կարգանանց Զորավարաց Եկեղեցական ու Ազգային Տօնին առիթով Սուրբ եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ Եկեղեցական արարողութեան պիտի հանդիսապետէ՝

Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Պատարագի աւարտին, վեհարանի դահլիճին մէջ վեհափառ հայրապետը պիտի ընդունի դպրեվանքի սաները եւ հաւատացեալ ժողովուրդը: Սիրով կը իրաւորուին մեր ժողովուրդի պատկերները՝ մասնակից դառնալու Սուրբ պատարագին եւ գօտեպնդուելու Վարդանանց ու Ղեւոնդեանց նահատակութենէն եկող հաւատքով ու հայրենասիրական ռգիով:

ԱՃԵԱՆ ԹՈՒՐՋԻ ՇՐՋԱՊՏՈՅՆՆԵՐԸ • St. Valentine, ԿԻՊՐՈՍ 12-16 Փետրուար 275 \$ • 1-8 Մարտ ԵՐԵՒԱՆ. քիչընք Հայկա՛ն՝ 399 \$, Պէրոնքն՝ 445 \$ • Ս. Յարութեան տօնին առիթով ԿԻՊՐՈՍ, 29 Մարտին 1 Ապրիլ 299 \$, իսկ ԿԻՊՐՈՍ եւ ԵԳԻՊՏՈՍ 29 Մարտին 3 Ապրիլ՝ 425 \$ • Սփիւռք-Հայրենիք Բ. համաժողովին եւ Հայաստան Հիմնադրամի 10ամեակին առիթով, ԵՐԵՒԱՆ 24-31 Մայիս. քիչընք Հայկա՛ն՝ 420 \$, Պէրոնքն՝ 465 \$ • Տեր Ձոր - Մարկոս 21-24 Ապրիլ 80 \$ • Հեռ. 01-261177, 240654 եւ 03-233978:

3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Այսու կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին թէ յառաջիկայ Երեքշաբթի, 5 Փետրուար կը կուգադիպի Ղեւոնդեանց Քահանայից տօնին, որ նոյն ատեն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Քահանայից տօնն է: Այս առիթով պիտի մատուցուի Սուրբ եւ Անմահ պատարագ Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ: Սուրբ պատարագին պիտի նախագահէ եւ յաւուր պատշաճի քարոզէ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ (ԱՌԱՋՆՈՐԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ)

ԼՕՍԻ «Ա. ՊՈՒԼՂՈՒՐԴԵԱՆ» ԸՆԿԵՐԱՐԺՇԿՎԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԼՕՍԻ «Ա. Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի ընկերային գրասենեակը կազմակերպած է անվճար դասընթաց մը, բոլոր այն հայուհիներուն համար (21 - 35 տարեկան) որոնք առիթը չեն ունեցած դպրոց յաճախելու եւ կամ կանոնի տարիքէն ձգած են ուսումը եւ կը փափաքին իրենք պիտենք վերադարձուիլ, օգտագործելով առիթը՝ հետեւելու հայերէնի, արաբերէնի, թուրքարեւմտեան դասընթացներու, ինչպէս նաեւ պատմական օգտաշատ գիտելիքներու: Այս ծրագրիին հիմնական նպատակն է ինքնաբար դարձնել հայ կիւր, որպէսզի օգտակար հանդիսանայ ինքզինքին եւ իր ընտանիքին: Յաւելեալ մանրամասնութեանց եւ արձանագրութեանց համար, հետաքրքրուողները պարտին անձամբ ներկայանալ ԼՕՍԻ Ա.Պ.Ը.Բ. կեդրոնի ընկերային գրասենեակ, Ա. յարկ, ամէն օր ժամը 9:00էն 1:00:

ԳՈՐԾԱԾԵՅՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը 2եր ինքնաշարժին պենզինին, մագնիսին, իւրին, ինչպէս նաեւ լուսալու համար, վճարումին հետ միաժամանակ մեքլայացուցեք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագրերուն յաջողութեան:



ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը FUEL CARD-ը կընթաց ստանալ հետեւեալ կեդրոններէն: • ԱՖՇԸԼԻ գրասենեակ, Պուրճ Համուտ • Համագոյնի գրախանութ, Պուրճ Համուտ • Գրատուն Caravelle, Չալքա • Գրատուն Sava, Այնճար • Գրատուն Կոմիտաս, Պէրոնք • Obelisk հաստատութիւն, Անթիլիաս

FUEL CARDԸ ԿՐՆԱԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԸՏԵՒԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ 1. CORAL JAL EL DIB, Ժէ Էլ Տիպ 2. HYPCO ANELIAS, Հարապ Ալ Գաւարնէ 3. SPEED ANELIAS, Կարողկոսարանի դիմաց 4. CORAL BAABDAT, Պապարտէ մայրուղի 5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ 6. HYPCO HAMRA, Պանք Տի Լիպանէ առաջ 7. MEDCO KARANTINA, Զարագնէյի մայրուղի 8. CORAL BHAMDOUN, Դամասկոսի մայրուղի 9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիխայել, Սաատ պողոտայ 10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթիհատ 11. MANAR FANAR, Ֆանար, Նատր պանդոկին կից 12. CALTEX ANJAR, Այնճար 13. BASSIL DORA, Տորայի կամուրջ 14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Ալմագ»-ի կից 15. ԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Համուտ, Սից Էլ Ֆիլի մայր պողոտայ

3աւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին: Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն: ՔԱՐՇԸ ԿԸ ՍՍԱՆԱԸ ԶՐԻՕՐԵԼ ԱՐԺԷՔԱՐՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

ՌՈՒՄԻՆՈՅ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ ՄՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՀՈԳԻՉ ՊԱՐԱԳԱՅ

31 Յունուարին Հայաստանի նախագահին առընթեր Մարզկալին հարցերու յանձնարարութիւնը նիստին նախագահ Պարոյր Հայրիկեան հրապարակեց Ռուսիոյ եւ ԱՊՀ երկիրներու մէջ սպաննուած Հայաստանի քաղաքացիներու ցուցակը եւ զայն որակեց «ուղղակի սահմակեցուցիչ»:

Հրապարակուած տեղեկագիրին համաձայն, 2000 թուականին նշալի երկիրներէն Հայաստան փոխադրուած են 63 քաղաքացիներու դիակներ, իսկ անցեալ տարուան 11 ամիսներուն՝ 52 դիակներ:

Պ. Հայրիկեան նաեւ նշեց, որ «Ձուարթնոց» օդակայանի պատասխանատու մարմիններէն քաղուած տեղեկութիւններու հիմամբ, 2000ին Հայաստան հասած է 814 դիակ, իսկ 2001ին՝ 748 դիակ, օդային ճամբով: Այս քաղաքացիներուն մահուան պատճառներուն մասին ամբողջական տեղեկութիւններ չկան, նշեց Պ. Հայրիկեան եւ դիտել տուաւ, որ նման դէպքերու պարագային մահացածներուն հարազատները անիմաստ կը նկատեն մահուան պատճառներու յայտնաբերման հետաձուտ ըլլալը, մտածելով, որ ոչ մէկ արդիւնքի պիտի հասնին:

Քննարկումէն ետք առաջարկուեցաւ դիմել համապատասխան մարմիններու, որպէսզի իրենց կարգին այս հարցը յանձնեն ազգային անվտանգութեան, արտաքին գործոց եւ ներքին գործոց նախարարութիւններու ուղարկութեան:

Այս ծիրին մէջ «Նոյեան Տապան» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ 1 Փետրուարին «Իրաւունք եւ միաբանութիւն» պատգամաւորական խմբակցութեան անդամ Աղասի Արշակեան դժգոհութիւն յայտնած է վերոյիշեալ տեղեկութիւններուն հրապարակութեան առնչութեամբ: Ան ըսած է, որ Ռուսիոյ մէջ կ'ապրին շուրջ մէկ միլիոն հայեր, որոնցմէ քանի մը հազարը բնականաբար կը մահանան մահէն տարի: Ան շատ բնական նկատած է այն, որ 2001ի ընթացքին շուրջ 800 դիակներ Հայաստան հասած են: Ան նաեւ համոզուած յայտնած է, որ նոյնիսկ ոճիւրներու զոհ զացած հայերուն մեծամասնութիւնը կը մահանայ իր հայրենակիցներուն կողմէ: Ա. Արշակեան ըսած է, թէ Պ. Հայրիկեանի յայտարարութիւնը կը միտի բաղդատելու Հայաստանի եւ Ռուսիոյ կացութիւնը եւ ժողովուրդին մէջ յառաջացնելու հակառուսական գաղտնիքներ:

ՋԱԻԱԽՔԻ ՄԷՋ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

29 Յունուարին Վրաստանի նախագահի հրամանագիրով Սամցխէ-Ջաւախքի շրջանի ներկայացուցիչ Կիլիա Պարամիձէ իր դիմումին համաձայն ազատ կացուցուեցաւ նախագահի լիազօր ներկայացուցիչի պաշտօնէն: 31 Յունուարին նախագահական հրամանագիրով Ջաւախքի նոր լիազօր ներկայացուցիչ նշանակուեցաւ Թեմուր Մոսախաչվիլի, որ մինչեւ իր նշանակումը կը զլխաւորէր նախագահի աշխատակազմի ԱՊՀի հարցերով վարչութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ՝ ՍԵՌԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՏԱՃԱՆԱԶՄԱՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ յառաջիկայ Մարտին Հայաստան-Վրաստան սահմանին վրայ պիտի հաստատուի սեռային փոխանցիչ հիւանդութիւններու ախտաճանաչման դարմանատուն մը՝ նախաձեռնութեամբ պելճիքական «Բժիշկներ» առանց սահմանի» կազմակերպութեան: Ըստ կազմակերպութեան Հայաստանի ներկայացուցիչին, դարմանատունը պիտի ըլլայ Անդրկովկասի մէջ այս նպատակին յատկացուած ամէնէն մեծ կեդրոնը, ուր պիտի ախտաճանաչուին եւ բուժուին սեռային հիւանդութիւններով եւ ՄԻՏԱՌով վարակուածներ: Նշեց, որ դարմանատունը գաղտնի պիտի պահէ իր պարագաներուն ինքնութիւնը: Դարմանատան մէջ պիտի գործեն երկու բժիշկներ, սեռային գործարաններու մասնագէտ բժիշկ մը, կանացի հիւանդութիւններու մասնագէտ բժիշկ մը եւ քանի մը հիւանդապահներ: Կեդրոնը նաեւ օժտուած պիտի ըլլայ տարրալուծարանով: Այս ծրագիրը պիտի իրագործուի Հայաստանի առողջապահութեան նախարարութեան համագործակցութեամբ:

ՄՈՍԿՎԱՅԻ ՔՈՆԵԱՔԻ «ԱՐԱՐԱՏ» ԳՈՐԾԱՐԱՐՆԸ ՎԵՐԱՆՈՒԱՆՈՒԱԾ՝ «ԱՐՄՎԻՆՕ» ԱՆՈՒՆՈՎ

Հայաստանի զինտնտեսութեան նախարար Զաւէն Գրիգորեան «Արմինֆօ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ Մոսկուայի գինիի եւ քոնեաքի «Արարատ» գործարանը շահարկութեան համար յանձնուած է երրորդ կողմի մը եւ վերանուանուած է «Արմվինօ» անունով: Ան ըսած է, թէ կառավարութիւնը այս որոշումը տուած է վերաշիւտագնելու համար գործարանը, որուն աշխատանքները երկու տարիէ ի վեր զարգած էին պարտքերու պատճառով: Զ. Գրիգորեան նշած է, թէ հաւանական է, որ գործարանին տնօրինումը յանձնուի անոր այժմու գործադիր կազմին, որ պիտի փորձէ ներդրումներ ապահովել: «Արմվինօ» գործարանը այսուհետեւ պիտի չարտադրէ «Արարատ» պիտակը կրող քոնեաքներ, որոնց այդ պիտակով արտադրութեան իրաւունքը կը պատկանի Երեւանի քոնեաքի գործարանին: «Արմվինօ»-ի հիմնական հովանաւորներն են ռուսական կառավարութիւնը եւ «Լեթո» դրամատունը:

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔԻՆ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռուպէրթ Քոչարեան 31 Յունուարին հրամանադրար մը ստորագրած է կառավարութեան կառուցողական ծրագրի մէջ կարգ մը փոփոխութիւններ կատարելու առնչութեամբ:

Հայաստանի նախագահի մամուլը զրասնեակին հաղորդած տեղեկութիւններուն համաձայն, ստորագրուած հրամանագիրով կառավարութեան գործառնական ծրագրուած է արտադրական ենթակառուցուածքներու գործունէութիւնը համակարգող նախարարի պաշտօնը եւ անոր տեղը ղերկրուած է տարածքային կառավարման եւ ենթակառուցներու գործունէութիւնը համակարգող նախարարի պաշտօնը:

Նոյն օրը նախագահ Քոչարեան հրամանագիր մը ստորագրած է Յովիկ Աբրահամեանը այս պաշտօնին նշանակելու համար՝ զայն ազատ կացուցելով Հայաստանի տարածքային կառավարման նախարարի պաշտօնէն: Նախագահ Քոչարեան 31 Յունուարին հրամանագիրով մը Զաւէն Գէորգեանը ազատ կացուցած է Հայաստանի զինտնտեսութեան նախարարի պաշտօնէն: Այլ հրամաններով Հայաստանի նախարարի պաշտօնէն հեռացուցուած են Կարապետ Կարապետեանը, Կարապետ Կարապետեանը եւ Կարապետ Կարապետեանը:

Քեան նախարար՝ ազատ կացուցուելով Հայաստանի արտադրական ենթակառուցներու գործունէութիւնը համակարգող նախարարի պաշտօնէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ 300 ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐ ԿԸ ՅԱՆՁՆԵՆ ՄՏԱՑՈՒԱԾՔԻ ԵՒ ԵԿԱՄՈՒՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐՆԵՐ

«Արմինֆօ» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի նախագահը, վարչապետը, պետական եկամտներու նախարարը եւ այլ բարձրաստիճանի պաշտօնատարներ յանձնած են իրենց ստացուածքներուն եւ եկամտներուն մասին յայտարարագիրներ: Բարձրաստիճանի պաշտօնատարներու ստացուածքի եւ եկամտի յայտարարագիրներու յանձնումը սկսած էր 1 Յունուարին եւ աւարտած՝ 1 Փետրուարին: Մինչեւ 30 Յունուար պետական եկամտներու նախարարութիւնը ստացած էր միայն 300 յայտարարագիր: Նշեց, որ ստացուածքի եւ եկամտի յայտարարագիր պէտք է յանձնեն շուրջ 10 հազար հոգի, որոնցմէ 2960ը պետական բարձրաստիճանի պաշտօնատարներ են, իսկ մնացեալները՝ անոնց պարզաբնէր:

Պետական եկամտներու նախարար Երուանդ Զախարեան ըսած է, թէ յառաջիկայ 3-4 ամիսներուն ընթացքին պիտի հրապարակուին վերոյիշեալ յայտարարագիրները: Օրէնքին համաձայն, յայտարարագիրները ճշգրտած ժամանակամիջոցին չյանձնելու պարագային, օրինախախտները պիտի ենթարկուին 50 հազար դրամ (շուրջ 88 տոյար) տուգանքի: Նախարարութիւնը նաեւ պիտի ստուգէ յանձնուած յայտարարագիրներուն հաւաստիութիւնը:

«ՆԱՅԻՐԻՏ-1»Ը ՊԻՏԻ ՅԱՆՁՆՈՒԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԸ

Հայաստանի կառավարութեան 31 Յունուարին նիստին որոշուած է «Նայիրիտ-1» գործարանի կառավարումը յանձնելու անգլիական ՌԱՆՍՍԻՎ կրուի» ընկերութեան, մէկ տարուան ժամկէտով:

Հայաստանի արդիւնարներու եւ առեւտուրի նախարար Կարէն Ճշմարիտեան դիտել տուած է, որ անգլիական ընկերութեան հետ բանակցութիւնները պիտի աւարտին 20 օրէն, իսկ համաձայնագրի ստորագրումէն մինչեւ 60 օր քառօրէն գործարանը պիտի վերսկսի արտադրել:

Խուսափելով յստակ գումարներու մասին խօսելէ՝ նախարարը նաեւ համոզուած յայտնած է, որ անգլիական ընկերութիւնը կը հանդիսանայ գործարանին ամէնէն հաւանական գնորդը: Ան նշած է, որ «Նայիրիտ-1»ը պիտի օժտուի նոր սարքաւորումներով, ինչպէս նաեւ յատկացումները պիտի ըլլան գործարանը կատարելագործելու նպատակով: Մինչեւ 4 տարի գործարանին կատարելութեան ներդրումները կրնան կարգի մը 20 միլիոն տոյար», ըսած է նախարարը: Յայտնեց, որ «Նայիրիտ-1»ի կառավարումը ստանձնելով՝ անգլիական ընկերութիւնը կը դրուի պարտաւորու-


թիւններու առջեւ, ինչ-որ նոր պարտքեր չկուտակելու պահանջով գործարանի տարեկան նուազագոյն՝ 6100 թոն արտադրութիւնը:

2001Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏԸ ԱԻՆԸՅԱԾ Է

«Նոյեան Տապան» լրատու գործակալութիւնը կը յայտնէ, թէ Հայաստանի կառավարութիւնը գոհացուցիչ նկատած է պետական մաքսային յանձնաժողովին ներկայացուցած 2001ի տեղեկագիրը: Յանձնաժողովին նախագահ Արմէն Աւետիսեան ըսած է, որ լուրջ աշխատանք տարուած է ապահովելու համար մաքսային եկամտներու եւ ծրագրուած ցուցակները ամբողջացած են 102,4 առ հարիւրով: 2000 տարուան հետ ընդհանուր՝ պետական մաքսային եկամտները բարձրացած է 18,3 միլիոն դրամով: Ա. Աւետիսեան նաեւ ըսած է, թէ թափ առած է մաքսաներգութեան դէմ պայքարը: Մաքսային օրէնքներու խախտման 182 պարագաներու առիթով գանձուած է 210,9 միլիոն դրամ արժողութեամբ տուգանք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ ՄՈՒՏՔԸ՝ ՄՇԱԿՈՑԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ ԾՇԴՈՒԱԾ ՍԱԿՈՎ

Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարարութեան հրամանով 1 Փետրուարէն սկսեալ Հայաստանի թանգարանները այցելուները նախարարութեան կողմէ որոշուած գումարը պիտի վճարեն: Այսպէս, Ազգային պատկերասրահի եւ Հայաստանի պատմութեան թանգարանի այցելուները իրենց մուտքի սակ պիտի վճարեն 800 դրամ, Սերգէյ Փարաշնովի թանգարանի այցելուները՝ 700, Յովհաննէս Թումանեանի եւ Աւետիք Իսահակեանի տուն թանգարաններու այցելուները՝ 500 դրամ:



HAIGAZIAN UNIVERSITY

In coordination with
AL BUSTAN FESTIVAL

Cordially invites you to a lecture
On
